ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Էլինար Վարդանյանի, Նաիրա Զոհրաբյանի և Միքայել Մելքումյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-380-11.11.2013-ՍՀ-010/0) վերաբերյալ:

1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պետական նպաստների նպատակների շարքում, ի թիվս այլ նպատակների, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի (մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի աշխատավարձի) մասնակի հատուցումն է: Հետևաբար, օրենքի

նախագծի ընդունման դեպքում անհամապատասխանություն կառաջանա «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի դրույթների հետ:

2. Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում՝ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագրով անհրաժեշտ կլինի լրացուցիչ 15,533.856 մլն դրամ, որը նախատեսված չէ ինչպես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացված Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի նախագծով, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով:

«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նպաստառու ընտանիքների (երեխաների) թիվը նախատեսված է 11.200, իսկ մեկ երեխայի խնամքի նպաստի չափը՝ ամսական 18,0 հազ. դրամ: Ուստի, 2014 թվականին այս նպատակի համար նախատեսվել է 11.200 երեխա x 18,000 դրամ x 12 ամիս=2,419.2 մլն դրամ (առանց վճարման ծառայության):

Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակած վիճակագրական տվյալների՝ 2012 թվականի և 2013 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ծնված երեխաների թիվը կազմել է համապատասխանաբար 42.480 և 30.477 (2013 թվականի ընթացքում ծնված երեխաների թիվը կանխատեսվում է 40.636 [30.477/9 x 12=40.636]): Այսինքն, 2014 թվականի ընթացքում մինչև երկու տարեկան երեխաների թիվը կկազմի 83.116 (42.480+40.636=83.116):

Հետևաբար, օրենքի նախագծի ընդունման դեպքում 2014 թվականին մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք կունենա նախատեսվածից 71.916-ով ավելի երեխա (83.116-11.200=71.916): 2014 թվականին նպաստի չափը 18.0 հազ. դրամի չափով պահպանելու պարագայում մեկ տարվա համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցները կկազմեն՝ 15,533.856 մլն դրամ [(83.116 երեխա x 18000 դրամ x 12 = 17,953.056 մլն դրամ) - 2,419.2 մլն դրամ=15,533.856 մլն դրամ]:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես օրենսդրական նախաձեռնություն արդեն իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ նոր խմբագրությամբ նախագիծը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի քննարկումը և հեղինակներին առաջարկում է նախագծի դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված նոր խմբագրությամբ օրենքի նախագծի քննարկումների համատեքստում:

Ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն-ներ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով առաջարկվում է *ՀՀ-ում ծնելիության մակարդակի բարձրացման նպատակով մինչև երկու տարեկան երեխաների խնամքի նպաստի իրավունք տրամադրել նաև չաշխատող ծնողներից մեկին կամ խնամակալին՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) մինչև երկու տարեկան երեխաների խնամքի նպաստի իրավունք կստանան նաև չաշխատող ծնողներից մեկը կամ խնամակալը՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-380-11.11.2013-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005թ. հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 23-րդ հոդվածում՝

1) առաջին մասից հանել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող» բառերը,

2) երկրորդ մասում «ծագում է ծնողի համար» բառերը փոխարինել «աշխատող ծնողի համար ծագում է» բառերով :

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) առաջին մասի 3-րդ կետում «տեղեկանք» բառից առաջ լրացնել «աշխատող ծնողի համար» բառերը,

2) առաջին մասի 4-րդ կետում «ստացող» բառից հետո լրացնել «մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող» բառերով,

3) երրորդ մասից հանել «անկախ գործատուի հրամանում այդ մասին նշված լինելու հանգամանքից» բառերը,

4) 4.1.-ին մասում «ստացող» բառից հետո լրացնել «մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող» բառերով,

5) հինգերորդ մասում «համապատասխան» բառը փոխարինել «մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողի» բառերով,

6) վեցերորդ մասում «կամ աշխատանքից ազատվելուց» բառերը փոխարինել «իսկ չաշխատող ծնողի աշխատանքի ընդունվելուց» բառերով,

7) յոթերորդ մասում «եթե» բառից հետո ավելացնել «մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող» բառերը,

8) տասներորդ մասի «դ» կետն ուժը կորցրած ճանաչել,

9) տասներորդ մասից հանել «զ» կետում «կամ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետեւյալով.

Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական վիճակը, ծնելիության մակարդակը հեռու է բավարար լինելուց: Դրան են նպաստում նաեւ հանրապետության սոցիալ-տնտեսական ներկա իրավիճակը, աղքատության, արտագաղթի եւ գործազրկության ահազանգող ծավալները, նաեւ այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումների անբավարար լինելը:

Առաջարկվող օրենքի նախագծի ընդունումը կնպաստի ՀՀ-ում ծնելիության մակարդակի բարձրացմանը, մասնավորապես, առ այն, որ մինչեւ երկու տարեկան երեխաների խնամքի նպաստի իրավունք կստանան նաեւ չաշխատող ծնողներից մեկը կամ խնամակալը՝ մինչեւ երեխայի երկու տարեկանը լրանալը:

Բացի այց, օրենքի ներկայացվող փոփոխությամբ կբացառվի աշխատող եւ չաշխատող ծնողների միջեւ խտրականության որեւէ դրսեւորում, քանի որ վճարվող նպաստը ուղղվում է երեխայի խնամքին:

Այսպիսով, օրենքի նախագծը միտված է լուծելու վերոնշյալ խնդիրը: